## ՀԵՐԱՆՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆ

(Ծննդյան 85-ամյակի առթիվ)

Վ. Ա. ԴԱԲԻԵԼՅԱՆ

*Եթե ճակատագիրն անողոք չլիներ, թերևս ուրիշ կերպ հնչեր այս անունը, հնչեր ավելի վսեմ ու տիրական, հնչեր ծանոթ ու սիրելի, մեծ բանաստեղծների անունների կողքին, համահնչյուն... Բայց նա տասն և յոթ գարուն ապրեց ընդամենը, նա, որ իր բանաստեղծ բարեկամի բնութագրմամբ՝ «երազե, նիրվանայե, արցունքե, սերե շինված էակն էր, անրջային արարած մը, փափուկ, գերզգայիկ... Աստված ղանիկա ծաղիկ ստեղծած ըլլալու էր...»[1]։*

*Ընդամենը տասն և յոթ գարուն է ապրել Հերանուշ Արշակյանը, բայց այդքան երիտասարդ հասակում նա «ասել է այնպիսի խոսքեր, որ կյանքի փորձ ունեցողները կրնան, ասել է, իսկական բանաստեղծի ձևով»[2]։ Ու նրա թողած երգերը վավերական ապացույց են նրա ինքնատիպ տաղանդի։ Երգեր՝ «մարդկային, զգացված և հուզիչ, պարզ ու անսեթևեթ»։*

*Հերանուշ Արշակյանը ծնվել է 1887 թ. հուլիսի 28-ին, Կոստանդնուպոլսի Պեշիկթաշ արվարձանում, հանրային գործերով աչքի ընկած Հակոբ Արշակի ընտանիքում։*

*Երեք տարեկան հասակում Հերանուշը զրկվում է հորից և որբության դառնությունը ճաշակում, անընդհատ կսկծալով հոր մահը։ «Ամեն անգամ, որ նայվածքս հոն կհածի, կհիշեմ հորս գերեզմանը, որ հեռուն Շիշլիի գերեզմանոցին մեջն է»։ Տասը տարեկան հասակում Հերանուշը հաճախում է Մաքրիգյուզի քույրերի վարժարանը, ուր մնում է ընդամենը տարի ու կես, իսկ մի որոշ ընդմիջումից հետո մտնում է Պեշիկթաշի Մաքրուհյան վարժարանը։ Այստեղ ուսման մեջ նա մեծ հաջողությունների է հասնում։ Ուսուցիչները հիանում էին նրա գրած շարադրություններով։*

*Բայց ուսման ընթացքը ընդհատվում է, որովհետև բժիշկները նրան խորհուրդ են տալիս մեկնել գյուղ՝ բնության գրկում բուժվելու։ Կյանքի վերջին երկու տարին Հերանուշն ապրում է Էդի-Կուլեից դուրս, մի ագարակում և այդ տարիներին էլ թերևս գրում իր գործերը՝ անձկությամբ լի, մահվան տխուր կգայողությամբ, միաժամանակ բնության հրաշք գեղեցկության ներգործությամբ։ Իսկապես, հրաշալի էր բնությունը. բանաստեղծուհին հիացած էր իր առջև բացված տեսարանով։ «Արտեր կանաչ, կանաչ կտրեր են. հեռուն Պոլիսը բլուրեն վար կտարածվի իր վիժանուտ թաղերով. ավելի անդին լեռներ՝ մշուշը պլլված, ու Մարմարան անչափ աղվոր, անչափ սարսռուն արևուն հրակեզ ճառանչներուն տակ...»։*

---

[1] «Հերանուշ Արշակյան, իր կյանքը և բանաստեղծությունները», կազմեց Հրանտ Նազարյանց, Կ. Պոլիս, 1910, էջ 7 (այս գրքից բերված օրինակների էջերը միայն կնշվեն)։

[2] Սիմոն Հակորյան, Հերանուշ Արշակյան, Վիեննա, 1922։

Ծովը հրապուրում էր նրան։ Նա հաճախ, ժամերով կանգնում էր փոքրիկ լեռան վրա, հմայված դիտում ալիքները։ Մի բանաստեղծության մեջ Արշակյանը հիշում է այդ պահերից մեկը.

Անուշ զեփյուռը մեղմիկ
Գգվեր երեսը ծովին.
Ու մեղմով մը կը զարներ
Ալիքները ծովափին։
Շատ իրիկուն ես մենակ
Հոն կերթայի ու ժամեր
Կանգնած՝ աղվոր ծովակին
Կը հառեի իմ աչքեր։

Ագարակում, մենության մեջ, ավելի էր բորբոքվում նրա մեջ սերը գեղի մարդը։ Մոտիկ, հարագատ մեկի կարիքն է զգում բանաստեղծուհին, որի մոտ սիրտը բանա, պատմի իր ցավերը, իր խոհերը։ Եվ ահա «Բյուրակնի» 1904 թ. մի համարում Արշակյանը կարդում է բանաստեղծ Հր. Նաղարյանցի «Քույր մը» վերնագրով բանաստեղծությունը, ուր հեղինակը երազում էր ունենալ մի քույր, որի հետ կիսեր իր մտորումները։ Արշակյանը Նաղարյանցին ուղղում է մի ջերմաշունչ նամակ. «Եթե դուք քույր մը կըղձաք, ես ալ եղբոր մը պետք ունիմ, մեր չունեցածը իրարմով դտնենք...»։ Հետագա նամակները բացում են Արշակյանի շատ ապրումների էջերը, գծում են բանաստեղծուհու դիմանկարը։

Ամենայն հավանականությամբ Արշակյանը իր գործերի մեծ մասը գրել է այս երկու տարում՝ 1903—1904 թթ.։ 1905-ի գարնանը այլևս նա չկար։ Շատերի համար դա պատանեկան հասակ է, դեռևս չձևավորված, դեռևս անկայուն, բայց Հերանուշ Արշակյանը այդ տարիքում արդեն ճանաչում էր կյանքը, հասկացել էր կարծես ամեն ինչ և տարիքոտ իմաստասերի պես խորհում էր կյանքի մասին։ Այդ խոհերն են դառնում իր գրածի նյութը, իր գործերի, որ մտերիմների վկայությամբ բավականաչափ շատ էին. ծավալուն մեկ վեպ, նորավեպեր, ֆրանսերեն ոտանավորներ, շուրջ հինգ տասնյակ բանաստեղծություններ։ Բայց առաջին հրատարակիչները բանաստեղծուհու մահից հինգ տարի հետո հրատարակեցին մի գրքույկ՝ 24 բանաստեղծություն և մի քանի հատվածներ նամակներից։ Ցավոք, այդքանն է այսօր մեզ հայտնի Արշակյանից և մեկ էլ մի երկու բանաստեղծություն՝ ժամանակի մամուլում տպագրված։

Սակայն այդ մի փունջ բանաստեղծություններն ու մի քանի նամակներն էլ որոշակիորեն գծագրում են դիմանկարը մի երիտասարդ աղջկա, բացում են նրա զգացմունքների ու ապրումների մեծ աշխարհը, ցուցադրում բանաստեղծուհու անհատականությունը։

Բանաստեղծուհու աշխարհը բաղկացած է առավելապես կյանքի արձագանքներից, երազներից, ուրախ ու մռայլ օրերի հուշերից, երբեմն էլ մերկ ու դաժան կյանքի պատկերներից։

Աշխարհը, իրականությունը, որքան էլ զարմանալի թվա, 16—17-ամյա պատանուհու համար պարզ է ու շոշափելի։ Անդամ բնության, մարդկային

3 «Շանթ», Կ. Պոլիս, 1911, № 8։ Այս՝ «Թաշխանի ծովափը» բանաստեղծությունը չկա Արշակյանի ժողովածուներում։

կյանքի ու մահվան կնճռոտ հարցերն էլ չեն զարմացնում բանաստեղծուհուն։ Աշխարհի, մարդկանց, իր վիշտը նա արձանագրում է կարծես հաշտված իրողության հետ։ Երբեմն էլ սկեպտիկ է։ Արշակյանի այդ մի փունջ երգերում անգամ զգացվում է տրամադրությունների, զգացմունքների, թեմաների բազմազանություն. իր թշվառության, տրտմության տրամադրության կողքին հայտնվում է ուրիշի, իր նմանի վիշտն արտահայտող տրամադրություն, կյանքի փիլիսոփայական մեկնության կողքին՝ կյանքի սոցիալական դրաման, իր մոտալուտ մահվան ողբերգական զգացողության կողքին՝ պայծառ անանձնական սերը մարդու նկատմամբ։

Առաջին պահին կարող է թվալ, թե Արշակյանի բանաստեղծությունները միատարր են, թե նա պարզապես իր տխուր կյանքի տարբեր ժամերն է դարձրել ստեղծագործության նյութ, թե դրանք առավելապես անձնական տրամադրություններ են։ Արշակյանը քնարերգու է, և բնական է, որ անձնական տրամադրությունները գերիշխող լինեին։ Սակայն այդ անձնականը միջոց է լոկ ընդհանրապես տառապող մարդու վիշտը երգելու և ներկայացնելու կյանքը իր խոր հակասականության մեջ։ Մի կողմից բնության գեղեցկությունը, կյանքի տենչը, մյուս կողմից՝ սոցիալական անհավասարությունը, կյանքի դաժան օրենքը՝ վերահաս մահը։

Ճշմարիտ է այն, որ առանց գրողի կյանքի, սոցիալական ու գրական միջավայրի ծանոթության հնարավոր չէ ճիշտ ներկայացնել տվյալ գրողի ստեղծագործության գաղափարական, պատմական ու գեղարվեստական արժեքը։ Արշակյանի կյանքը ղուգադիպեց արևմտահայ կյանքի ամենածանր շրջանին, երբ հայությունը տառապում էր «սովի ու սուրի ճիրաններում»։ Բանաստեղծուհի Հերանուշ Արշակյանը 3 տարեկան հասակում զրկվեց հորից և նյութական ծանր պայմաններում մեծացավ։ Սակայն մտքով ժամանակից շուտ հասունացած պատանուհուն գտավ... հյուծախտը։ Բանաստեղծուհին բողոքում է Աստծուն և աշխարհին այդպիսի անհավասարության համար։

Ցավի բաժակն մինչև մրուր քամեցի,
Արյունելով շրթունքներրս կանացի,
Խոցոտելով ինչ որ բարի կար մեջրս,
Ինչպես սիրտիս զգացումն ալ խոցեցի։

Աչքերուս մեջ արցունքներրս ցամքեցան,
Ինքրս իմ մեջ տառապեցա ես անձայն.
Եվ բառերով օրորվեցա մինչև որ
Հույսի բոլոր աղբյուրներրս ցամքեցան։

Ու արյունրս կաթիլ-կաթիլ թափեցավ,
Հոգվույս ցավին հետ միացավ մարմնի ցավ,
Խավարը և լռությունը հավիտյան
Սպառնացին պարուրել զիս շտապավ։

Տառապանքը ինծի բաժին ըրիր, Տե՜ր,
Եվ հնազանդ ես կրեցի անստվեր,
Ինչ ծանրը բեռ, որ ուսերուս բեռցուցիր,
Կյանքը ծա՜նր է, ուժս է համակ սպառեր (էջ 35)։

Սա նրա հոգու կենսագրությունն է։ Ու թեև այդ ծանր կյանքից նրա «ուժն համակ սպառեր էր», բայց ճշմարիտ չէ բանաստեղծուհին, երբ առաջին տան մեջ ասում է, թե խոցոտվել է իր մեջ ամեն բարի բան։ Նրա սիրտը, այնուամենայնիվ, տրոփում է բարությամբ՝ ուրիշ թշվառների, խեղճերի ու տնանկների համար։ Ու երբեմն էլ այդ տառապողների պատճառով նա մոռանում է իր վիշտը, մոռանում է իրեն։

«Ես ալ միևնույնն սիրով կսիրեմ ամեն անոնք, որ կույր, տգեղ, հաշմանդամ են, բոլոր անոնք, որոնք մարդկութենեն հալածված են ամեն տեղ...

...Ուղեղս կծփա, եթե տառապողներ կան, ամոքողներ ինչո՞ւ չի կան շատ...» (էջ 15)։

Եվ որքան էլ հավատացյալ ու բարեպաշտ, Արշակյանը ո՛չ միայն չի ընդունում, այլև հակադրվում է այն տեսակետներին, թե կյանքի թշվառությունները, հակասությունները ի վերուստ են տրված, թե աստծո աշխարհը անփոփոխ է։

«Մի ամբաստանեք աստված, ըսելով թե անիկա դժբախտներ, ղրկյալներ ըրած է. երբեմն մարդիկ են, որ իրարու կյանք կխորտակեն ու երբեմն ալ մենք մեր ոտքերուն տակ ցավի անդունդ մը կբանանք»։

Նա գրում է հասարակ, տանջված աշխատավորուհու մասին։ Հեղինակը նուրբ դիտողականությամբ նկատում է կյանքի անհավասարությունը և բանաստեղծության ենթատեքստով քննադատում դրամատիրական հասարակարգը։ Հրաշալի է գտնված բանաստեղծության վերնագիրը՝ «Օրերուն ոճիրը»։

Պատուհանին մոտ,
Ուր արևն իր նվաղկոտ
ապրիլի
Դժգույն ցոլքովը կը փայլի,
Կույս աղջիկը ծաղկատի,
Ասեղն առած՝ կ'աշխատի։

Ու կը սահին ժամ ու օր
Այնքան արագ իրավ որ
և տնայն,
Բայց աղջիկը չըզգար դայն,
Այլ կը կարե գլխահակ՝
Ճակատագրին անգիտակ։

Եվ օրերը սահեցան
Միօրինակ և անձայն
ու դժգույն՝
Մարտի արևին հանգույն,
Մինչև որ ալ ձանձրույթեն
Կույսն ասեղին բրալ քեն։

Գարնան արևը նորեն
Կը կայծկլտար եթերեն.
կույսն անմեռ,
Ակնարկ մ'ուղղեց իր հայլիին
սրտադեղ,

Որ շատոնց է, կիսավեր,
Փոշիին մեջ մոռցեր էր։

Ու քարացավ զարմանքեն,
Չի պատկերըն իր դեմեն
ձյունաթույր
Յույց տար մազերն իր գանգուր.
Արցունք մ՝ինկավ աչքերեն.
— Օրերն ի՞նչ շուտ սահեր են... (էջ 38)։

Օրերը մեծ ոճիր են գործում՝ սպանում են մի երիտասարդ կյանք։ Օրերը՝ ժամանակն է, ժամանակաշրջանը, հասարակական կարգը։

Արշակյանը գրում է պանդուխտի մասին։ Պոլիսը լցվել էր գավառներից պանդխտած հայերով։ Մի կտոր հացի համար էին եկել։ Պանդխտությունը ծանր երևույթ էր մեր ժողովրդի համար։ Ներկայացնելով պանդխտության, այսպես ասած, հոգեկան կողմը, Վարուժանի բնութագրմամբ՝ կարոտախտը, ղարիպի սերն ու կարոտը իր ընտանիքի նկատմամբ, Արշակյանը հուշում է նաև երևույթի երկրորդ և կարևոր կողմը՝ սոցիալական պատճառները։ Եվ երկուսի վարպետ համադրմամբ Արշակյանն ստեղծել է այդ թեմայով մեր պոեզիայում իսկապես հաջողված մի գործ։ Պատմում է հերոսը՝ ղարիպը, որ 20 տարի չարքաշ կյանքով տառապում է օտար քաղաքում, մորից, հայրենի տնից հեռու։ Եվ որովհետև ղարիպի բերանով է խոսում բանաստեղծուհին, շատ սովորական, պարզունակ այդ տողերի տակ, կարոտով տառապող սիրտ է տեսնում ընթերցողը, զգում է նրա որդիական պարտքը իր ծնողի հանդեպ։

Անո՞ւշ մարիկ, ա՛լ քեզ տեսնել
Մտքես հաներ եմ, գիտե՞ս.
Ճիտիս պարտքն է խաչս քաշել՝
Պատառ մը հաց խրկել քեզ (էջ 40)։

Բայց պանդուխտն ուժասպառ ու հիվանդ է արդեն, աշխատելու էլ ուժ չունի և կմահանա մորից հեռու, կարոտ հայրենի տան։ Բանաստեղծական խոր հղացմամբ, տպավորիչ պատկերով է ավարտվում բանաստեղծությունը։ Կըմեռնի պանդուխտը, բայց գուցե այդ մահը մխիթարական է, չէ՞ որ հանդարտ կքնի այլևս, հոգնաբեկ մարմինը էլ չի նվվա ցավից և, որ ամենագլխավորն է, չի զգա մոր նկատմամբ ահավոր կարոտը։

Ու փոսին մեջ հոն, մինակուկ,
Լուռ կը պառկիմ ես, մարիկ,
Ոնե կարոտդ չեմ քաշեր,
Քուն կը լինիմ հանդարտիկ։

Այս բանաստեղծությունը մեզ հիշեցնում է Վարուժանի նույն տարիներին կամ մի քիչ ուշ գրված «Հիվանդ է» բանաստեղծությունը։ Ազդեցության հարց չկա այստեղ, այլ հաստատում այն մտքի, որ այդ տարիներին հայ կյանքում պանդխտությունը տարածված և ծանր երևույթ էր։ Կարելի է օրինակները բաց-

մապատկել Արփիարյանի, Վարուժանի, Փափազյանի, Սիամանթոյի, Զարդարյանի և այլոց շատ գործերով։

Մի քանի այլ բանաստեղծություններում նույնպես Արշակյանը սրտացավորեն է խոսում խեղճերի ու թշվառների մասին։ Ընդհանրապես նա բոլոր տանջվածների ու վշտակիրների բերանով գանգատ է ուղղում Աստծուն ու բնությանը, բողոքում այն անարդարաշնակության դեմ, որ բնությունը հրաշալի է, իսկ այդ գեղեցկության մեջ տառապում է մարդը։ «Գանգատ» բանաստեղծության մեջ այդ հակասությունը մորմոքով է պատկերում բանաստեղծուհին։ Դիշեր, ծով, երկինք, հովիտ, նավակներ ու լուսին, ալիքների խաղ, բայց բանաստեղծուհու սիրտը տխուր է, որովհետև «դեղեցիկ այս պահուն» «հոգիներ կան խեղճ, թափառկոտ, մենավոր» անդունդից էլ խոր վերքով։

Ուրեմն ո՞ւմ է պետք գիշերային այս հրաշալի պահը, բնության այդ գեղեցկությունը։

Ուրեմն ինչո՞ւ, գիշեր, աղվոր ես այսքան,
Եվ ծաղիկ, ծառ, ալիք, լուսին կը խնդան,
Երբ կանթեղի մը պլպլուն լույսին տակ՝
Աղվոր աչքեր արցունքի՞ մեջ կը լողան։

«Լքում» բանաստեղծության մեջ այդ բողոքը ավելի ըմբոստ շեշտեր է ընդունում.

Եվ ամեն ինչ, ծով ու աստղեր, երկինք, նավ,
— բավ է, բավ,—
Զվարթորեն ժպտիք վրա աշխարհին
ու որբին... (էջ 30)։

Այդ տրամադրությունն է ընկած նաև «Լուսինք» արձակ բանաստեղծության մեջ։ Բնության մեծ գեղեցկությունը, բանաստեղծների գովերգած լուսինը ատելի է Արշակյանին, որովհետև՝ «կախարդանքը քո լույսիդ ու հրապույրներուդ աղվորի չեն խոսիր սրտիս», որովհետև՝ «արցունքները շատ գիշեր աչքերս խեղդեր են...»։

Այնուամենայնիվ ահավոր իրողությունն այն էր, որ դժվար ու դժբախտ կյանք էր վիճակվել բանաստեղծուհուն, որ աշխարհում, այնուամենայնիվ, լքյալներն ու թշվառները քիչ չէին, որ մարդիկ բաժանված են երջանիկների ու դժբախտների, վայելողների և զրկվածների։ Ո՞րն է ելքը։ Բանաստեղծուհին հակադրում է իրեն մի երջանիկի և ջանում փիլիսոփայորեն արդարացնել նաև դժբախտի գոյությունը։ Դժբախտին մխիթարել այն փաստարկով, թե տառապած մարդը ավելի հեշտ կընդունի մահը, իսկ երջանիկը կապրի ահավոր ողբերգություն։ Միամիտ մխիթարանք։ Միևնույն է՝ մահը հավասարության նշան է դնում։ Բայց սա խաբկանք է լոկ, իրողությունը այն երկու ճամփաներն են, որ գոյություն ունեն կյանքում։

Ես ու դուն իրարմե տարբեր ենք, օ՜, տարբեր,
Դուն լայն ճամփեն կ'երթաս, ուրախ ու անխոով։
Մինչդեռ ես իյնալու վախովը տարուբեր՝
Նեղ ու ցից ուղիես կը քալեմ արցունքով (էջ 33)։

Մեկի ճանապարհը անցնում է ուռենիների ստվերով, դետնին բյուր ծաղիկներ, ղեփյուռը հեշտանքով գդվում է անցնողին, իսկ մյուսը՝

Ճամփան ուր կը քալեմ, ուղին է ցավերու,
Հոն մտնողը ժամ առաջ դուրս ելնել կը փութա,
Դուն կ'երթաս համփայեն երջանիկ կյանքերու,
Սակայն լոկ ճամփորդ մ'ես ինծի պես տարակաս։

Բայց երկուսս ալ, ավա՜ղ, կը հանգինք սև վիհին,
Ու պետք է, որ անցնինք մահի սև կամուրջեն,
Դուն՝ ուրախ, ես՝ տրտում, երբոր գանք դեմ առ դեմ,
Այն ատեն ո՞վ արցունք պիտ հեղու մեր մեջեն։

Եվ բարին, լույսը, անանձնական սերը մնաց բանաստեղծուհու սրտում նաև այն պատճառով, որ ապաքինման ու լուսավոր օրվա հուսո ճառագայթը չմարեց նրա սրտում։

Ամենածանր պահերին անգամ մարդ արարածը իր հոգու ամենահեռավոր ծալքերում որպես ջահ վառ է պահում հույսի կանթեղը, որ լուսավորի իր ճամփան՝ հուսալքության մթին բավիղներում։

Սիրտիս պարապ խորշերուն մեջ մթամած՝
լույս մը կա,
Ինչպես հուրը խոլ շրջմոլիկ ճահճին թաց
շող կուտա,
Գուրգուրանքով մը անսահման զանիկա
կը պահեմ,
Կյանքիս ուղին կը պաշտպանե ան հիմա
խավարեն։
Այդ խավարին մեջ չի թողուց որ իյնամ
ես լքուն,
Աղատեց զիս անկումներե խոլական,
անկայուն։
Ո՞վ աստված իմ, որ այդ լույսը սիրտիս մեջ
վառեցիր,
Թող որ ան հոն միշտ փայլի վառ ու անշեջ,
անձանձիր (էջ 35)։

Արշակյանի բանաստեղծությունների մի մասն էլ վերհուշի տրամադրություններ են։ Ագարակում, առանձնության մեջ, նա հաճախ տրտմում է այն մտքից, որ ձմռանը քաղաքում ուրախություններ ու հանդեսներ են լինում, որ «կան մարդիկ, որոնք միայն վայելելու համար կապրին», իսկ ինքը՝ «Տրրտմորեն կխորհիմ իմ ամեռային գիշերներուս վրա զոր պիտի անցնեմ ագարակին ընդարձակ ու պաղ սրահին մեջ»։ Ուրեմն ինչպե՞ս մխիթարվել, ինչպե՞ս մոռացության տալ տխուր գոյությունը... Ծնվում է անցած երջանիկ օրերի վերհուշը։

Ցավերուս մեջ որ հաճախ ղիս են պատեր
Երբեմն անուշ հիշատակներ ալ ունիմ...
...Երջանիկ հուշ մը կը պատե ղիս համակ,
Արբշռանքով կը տարվիմ ետ, անցյալին (էջ 26)։

Եվ դեռատի տարիների, «սիրտը հույսով, աչքը լեցուն ժպիտով» օրերի («Երջանիկ հուշեր») հուշերը, ծառերի հովանու տակ, Մարմարայից փչող հովերի, տերևների սոսափի, արեգակի «լույս փոշու» ներկայությամբ իր հրճվանքի ու հոգեպարար երգի հիշողությունները («Կախօրրան») մխիթարանքի վերհուշներ են լոկ, կարճատև ու փոքր «ինչպես մութին մեջ փայլփլող լույս կետեր»։

Որքան էլ հիվանդ, որքան էլ թախծոտ, սակայն կյանքի ու բնության սիրահար էր բանաստեղծուհին, «գուրգուրանքով մը անսահման» պահում էր հույսը, օրերի կենսական թրթիռներով էր ապրում։ «Ես՝ առտուները, զարթոնքի ու նոր արթնացող մարդկության ձայները ունկնդրելով է, որ կսիրեմ գրել. Երբ ես գրեմ, գրելիքս չեմ մտածեր, այլ ղգացածս կգրեմ ...Եվ ես, որ երգով կուլամ ու երգով կժպտիմ՝ կպաշտեմ երգերը. արդեն աղջիկներուն հոգին ու կյանքը երգ մը չէ՞» (էջ 11)։

Ի՞նչ է պետք մարդուն։ Այս հարցը բանաստեղծուհին իր համար լուծում է շատ ինքնատիպ կերպով. խանդաղատանք է հարկավոր, սրտացավ, մտերիմ վերաբերմունք։ Գորով՝ մարդը մարդու նկատմամբ, անձանձրույթ գորով... Եվ այդքանը, թերևս բավական է կյանքը քաղցրացնելու համար։

Ահա մի փոքրիկ պատմություն՝ քաղված Արշակյանի նամակից, որ կարող էր փոքրիկ նովել, արձակ բանաստեղծություն դառնալ, որ վկայությունն է նաև այն բանի, թե Արշակյանի մեղ չհասած արձակ էջերը կարող էին հաջողված լինել կամ կարող էին հիմք դառնալ հետագա լավ գործերի համար։

«Կղզիեն իջած օրս շոգենավին խցիկին մեջ հիվանդ մանկիկի մը պատահեցա, ունեվոր մարդու ղավակ էր թերևս... մայրը, հայրը, վայելչաղգեստ անձեր էին։ Սպասուհի մըն ալ կար։ Բայց ոչ ոք կնայեր պեպեքին վրա, անկյուն մը թողեր էին, ուր կհևար ան, իր խեղճուկ անուշ նայվածքը գետին հառած, վրան նայող չի կար։ Մայրը ու հայրը իրենց բոլոր գորովը, բոլոր հիացումը կը թափեին մյուս ղավակին վրա. շփացած, պճնված աղջիկ մը, անով կզբաղեին, անոր քմայքները կկատարեին, համբույրներ, սիրուն բառեր, ամեն բան անոր կուղղեին։ Պահ մը մայրն ու հայրը աղջիկնուն հետ դուրս ելան. հարցուցի սպասուհիին, թե անո՞նցն էր այս տղան։ Ըսավ, թե անոնցն էր, թե շատ խնամած էին, շատ ստակ ծախսած էին, չէր աղեկցած, թե միշտ կուլար։ Կթվեր, թե պակաս բան մը չուներ այդ տղան։ Բայց ոչ. ամենամեծ բանը կըպակսեր այդ տղուն, անձանձրույթ գորովը... Ինծի այնպես եկավ, որ նայվածքի մը, ժպիտի մը, համբույրի մը կը կարոտեր ան, ու իսկույն ծաղկեփունջես կարմիր ծաղիկ մը հանեցի տվի. այն ակնարկը զոր վրաս ուղղեց երբեք չպիտի մոռնամ» (էջ 15)։

Հերանուշ Արշակյանը սիրում էր կյանքը, և կյանքի ուժգին սիրո ու մահվան ղգացողության հակադրության ողբերգական շեշտերով են լցված նրա երգերը։ Ճշմարիտ ցավի արձագանքներ են դրանք՝ ծաղիկ հասակում կյանքից հեռանալու դառնագին հեծեծանքներ։ Ահա և դրանցից մեկը՝ «Մահվան մոտ» բանաստեղծությունը, որ մեր պոեզիայի ընտիր էջերից է։

Վերջալույսը կը նվաղի.
    հոգնած եմ, մայր անուշիկ,
Կուրծքիդ վրա գլուխս հենած,
    թող որ պառկիմ ա՛լ հուշիկ.
Քնել, գիտեմ, թե կարող չեմ,
    բայց կրնամ գեթ արտասվել,
Միտքս տխուր այս վիճակիս
    դեռ կը մնա անընտել։
Հովը ծառերը կը սարսե...
    կը մսիմ ես մութին մեջ,
Թեև ցավիս սև կրակը
    կը վառի ներսս անշեջ։
Վերջս մո՞տ է... վաղն առավոտ,
    երբ ծագե նոր արշալույս,
Սառ մարմինս շատոնց հոգիս
    պիտի տված ըլլա խույս։
Անկողնիս քով, դուն ծնրադիր
    ինծի խոսիս պիտի դեռ,
Ու անբարբառ իմ բերանես
    իզո՞ւր սպասես խոսքեր.
Թևերովդ մի՛ շրջապատեր,
    մի՛ ջանար տաքցընել զիս
Սիրտս այնքան խրոնված է
    որ հոգս չէ մսիլս։
Վաղը երբոր գերեզմանիս մեջ
    միս-մինակ փակեն զիս,
Ո՞հ, այն ատեն արցունքներովդ
    տաքցուր պաղ հողը շիրմիս.
Վերջս մո՞տ է... ալ ո՛չ շարժիլ,
    ո՛չ մտածել չեմ կրնար,
Սիրտս միայն կը կտրտի...
    մատաղ մեռնի՞լն է դժվար... (էջ 43)։

Դուրյանի ճակատագիրն էր։ Բայց Հերանուշը Դուրյանի պես ըմբոստ չէ։ Ջունի պոռթկումի նման պահեր։ Թվում է, թե Հերանուշը հասկացել է ամեն ինչ, հաշտվել իրադրության հետ, միայն թե բողոքում է այդքան անարդարության դեմ։

Դուրյանի պես խորունկ զղացող ու փոթորկվող չէ Արշակյանը, այլ զգացող, խորհող ու տառապող, հաճախ էլ բարեպաշտ, ճակատագրին հնազանդ։ Մահը մոտ է, ոչինչ չի կարող անել այլևս. բողոքել, ո՞ւմ դեմ, ինչի՞ համար։ Բայց ախր շա՞տ է դժվար, չէ՞ որ շա՛տ է երիտասարդ։ Եվ ցավատանջ ողբերգությունից մղկտում, կտրատվում է սիրտը՝ «մատաղ մեռնիլն է դժվար...»։

Ասում են՝ մահից առաջ Հերանուշ Արշակյանի վերջին խոսքը եղել է՝ «որքա՞ն անգութ եք...» անորոշ նախադասությունը։ Ո՞ւմ էին ուղղված, արդյոք, այդ բառերը. արարչի՞ն, մարդկա՞նց, բնությա՞նը... Ահավոր ողբերգություն

էր դա, ցավատանջ իրողություն. կյանքից հեռանում էր երիտասարդ մարդը, կյանքը կորցնում էր հրաշալի բանաստեղծուհուն։

Հերանուշ Արշակյանը, չնայած իր տարիքին, կարդացած, եվրոպական գրականությանը ծանոթ անձ էր, և նրա ինքնաբուխ տաղանդը ձևավորվում էր նաև գրական մեծությունների ստեղծագործությունների ազդեցությամբ։ Մեծարենցի ստեղծագործության հետ որոշ նմանությունը ազդեցությամբ չի բացատրվում, որովհետև նրանք միմյանց համարյա անծանոթ են եղել։ Հայ բանաստեղծներից Պետրոս Դուրյանն ու Կարապետ Ոսկյանն են որոշ դեր խաղացել Արշակյանի ձևավորման գործում։ Նրանք սիրելի էին բանաստեղծուհուն հատկապես ճակատագրերի նմանության պատճառով։ Արշակյանին ծանոթ էին նաև եվրոպական մեծ գրողները։ «Պայրոնն, Շեքսպիր, Լամարթին բավական ծանոթ են ինծի,— գրում է Արշակյանը իր մի նամակում։— Ոսկյան իմ ամենասիրած բանաստեղծս է եղած, ինչպես Դուրյանը։ Իր գրածները ցավի աղաղակներ են, ան ալ Դուրյանի պես իր մահը նախատեսած է։ Աստված իմ, արդյոք բոլոր հայ բանաստեղծները այս տխուր վախճանի՞ն կհանգեն» (էջ 14)։

Արշակյանը հիացած էր ֆրանսիացի բանաստեղծ Ա. Մյուսեի երգերով։ Նրա «փափուկ ու զգայնոտ գրիչը» Արշակյանին հաճախ է ոգևորել։ Թե ինչ հոգեհարազատություն կա նրանց մեջ, այդ խոստովանել է ինքը՝ բանաստեղծուհին։ «Մյուսեի բանաստեղծությունները երգերու կնմանին, և ես, որ երգով կուլամ և երգով կժպտիմ՝ կպաշտեմ այդ երգերը. արդեն աղջիկներուն հոգին ու կյանքը երգ մը չէ՞»։

Արշակյանը ծանոթ էր պոեզիայի ժանրերին, գիտեր ինչը ինչպես է գրվում, փորձում էր գործեր ստեղծել տարբեր ժանրերով։ Անգամ մեզ հասած քնարական այս մի փունջ բանաստեղծությունները վկայում են, որ բանաստեղծուհին իր մտորումները, ապրումներն արտահայտելու տարբեր ձևեր էր փնտրում, օգտագործում էր տարբեր չափեր, հանգավորման այլազան ձևեր, տների բաժանման տարբեր եղանակներ։ Արշակյանը ո՛չ միայն իր հոգին է ներկայացրել ընթերցողին, այլև հոգ է տարել, որ այն ներկայացվի բանաստեղծական լավ ձևի մեջ։ Պարզ, անսեթևեթ տողերը, սակայն, երաժշտական են, ռիթմիկ, հանգերը դիպուկ են, բայց ոչ բոնաղբոսիկ։ Ահա մի երկու օրինակ՝

Ցավի բաժակն մինչև մրուր քամեցի,
Արյունելով շրթունքներս կանացի... (էջ 35)։

Եկուր, նայե, ծովն է հանդարտ, ով ընկեր,
Լուսնի շող մը կապույտին մեջ է ինկեր... (էջ 29)։

Պարզ ու աոօրեական թվացող տողերով Արշակյանը հաճախ այնպես տպավորիչ է ներկայացնում իր տրամադրությունը, որ այն դրոշմվում է ընթերցողի մտքում. երբեմն նկարչորեն է ներկայացնում պատկերը, երբեմն էլ բանաստեղծորեն ընդգծում։

Գիշերները վառարանի դեմ պառկած,
Գորգին վրա, դիտելով բոցը կրակին,
Այրող փայտին ճարճատյունով օրորված,
Երազներս երջանկորեն կը վառին (էջ 26)։

Բայց ամեն դեպքում՝ Արշակյանի արվեստի գաղտնիքը նրա ապրումների անկեղծության ու ողբերգականության մեջ է։

Թեև դատող, խորհող և ոչ միայն զգացմունքներով առաջնորդվող անձնավորություն էր Արշակյանը, թեև ինքն էլ ցավով արձանագրում է, որ «հիվանդություններե ավելի գաղափարներն են, որ շատ հեղ մեզ կսպանեն», բայց այնուամենայնիվ ճշմարիտն այն է, որ Հերանուշն ավելի շատ զգացող ու զգացնող է։ «Բանաստեղծներն ավելի կզգան և թերևս ասոր համար է, որ շուտ կմեռնին։ Զգայուն մարդը միշտ դժբախտ է, իր աչքերը միշտ արցունքոտ են»։

Արշակյանը չի հնարում, չի հորինում, նա պատմում է իր տեսած-զգացածի մասին։ «Երբ ես գրեմ՝ գրելիքս չեմ մտածեր, այլ զգացածս կգրեմ»,— ասում է բանաստեղծուհին իր մի նամակում։

Արշակյանի նամակները, որ հաճախ բնության, որևէ դեպքի, իրադարձության նկարագրություններ են պարունակում իրենց մեջ, արժեքավոր են ոչ միայն բանաստեղծուհու գիմանկարը ամբողջացնելու տեսակետից։ Դրանք միևնույն ժամանակ ցուցադրում են ընթերցողին Արշակյան-արձակագրի կյանքն ու բնությունը արվեստագետի աչքով դիտելու և պատկերավոր ու հստակ պատմելու շնորհքը։ Ինչպես օրինակ. «Պատին-քովեն կդառնամ, դեղին ծաղիկ մը, միս մենակ, չոր հողերուն մեջ ծլեր է։ Չէ, չեմ ուզեր, որ բիրտ ոտքերու տակ կոխկրտվիս աղվոր, անշուք ծաղիկս, փրցուցի, որ տետրակներուս մեջ չորցնեմ»։

Կամ օրինակ՝ ագարակի, ծովի, գիշերների նկարագրությունները, փոքրիկ հիվանդ երեխայի պատմությունը, լուսնին ձոնված արձակ բանաստեղծությունը և այլն։

Արշակյանը «Ապրիմ-մեռնիմ» վերնագրով մի բանաստեղծության մեջ համանուն ծաղկի բերանով բողոքում է աշխարհում վիճակված իր բախտից։ Եվ հատկապես նրան մտատանջում է այն միտքը, որ կորչելու է անհիշատակ։ Շատ բնական զգացում է դա։ Դուրյանը խնդրում էր եղբորը՝ իր մահից հետո հրատարակել իր գրածները, որ չկորչի իր հիշատակը։

Արշակյանը գրում է.

Չեմ կրնա գանգատի,
Ոհ, հառաչ մը մինակ
Դուրս հանել ծաղկատի
Չոր կուրծքես ավերակ։
Փոշիին ու ցեխին
Մեջտեղը կորսըված,
Օր մ՚ալ կը կորսվիմ
Անանուն, անքերթված (էջ 34)։

Բանաստեղծուհու տագնապը տեղին չէր։ Նա չմոռացվեց «անանուն, անքերթված»։ Նրա թողած մի փունջ բանաստեղծություններն անգամ բավական են, որ անունը չմոռացվի։ Ավելին, այդ մի քանի երգերն անգամ իրավունք են տալիս նրան իր համեստ, բայց սիրելի տեղն ունենալ մեր պոեզիայի պատմության մեջ։

## ГЕРАНУШ АРШАКЯН

В. А. ГАБРИЕЛЯН

(Резюме)

Поэтесса Герануш Аршакян прожила всего 18 лет (1887—1905). До нас дошел небольшой цикл стихов, несколько писем и скудные биографические сведения. Потеря отца в раннем возрасте, нищета, усугубленная туберкулезом, оставили след на всем ее творчестве. В поэзии поэтессы нашли отражение ее мечты и грезы, светлые и печальные воспоминания. Аршакян—лирик. Ее личные муки лишь повод для вскрытия существующих противоречий между мечтой о прекрасной действительности и социальной несправедливостью, они были обусловлены также чувством близкой кончины. Это нашло отражение в таких стихотворениях поэтессы, как «Жалоба», «Две дороги», «Надежда», «Преступления дня», «Странник», «Перед смертью» и другие.

Стихи Герануш Аршакян волнуют читателя своей гуманностью и искренностью. Ее творчество занимает достойное место в истории армянской поэзии.